

ՎԱՀԱՆ ՆԱԼԲԱՆԴԵԱՆ

Դա մի անսպասելի, չմեղքող հեռագիր էր, որ մեզ հասաւ Էջմիածնից: Դեկտեմբերի 16-ին այնտեղ, կարճատև հիւանդութիւնից յետոյ՝ վախճանուելէ մեր թերթի տաղանդաւոր աշխատակից՝ երիտասարդ Վահան Նալբանդեան:

Մարդկային ճակատագրի այս արտասուելի անհաստատութիւնը և նրա այս անողոր քմահաճ խաղը անգամ յոյսերով, յոյզերով զեղուն կեանքերի հետ մեզ ըմբոստացնում է և կատարուած ողբալի իրողութեան հետ հաշտուել՝ չենք կարողանում: Ո՞վ կարող էր սպասել, թէ այդ դեղեցիկ և լաւ սկսուած կեանքը այդ աստիճան կարճատև, այդպէս վաղանցուկ է:

Վահան Նալբանդեանի ցաւալի մահով հայ հասարակութիւնը կորցնում է իր մի լաւագոյն անդամին. հայ գրական անդամտանը, որ հմուտ ձեռքերի այնպէս կտրօտ է, զրկւում է մի լաւ մշակից, և մեր թերթը մասնաւորապէս իր աշխատակիցների շարքի մէջ տեսնում է մի զգալի պարագայ:

Եւ որպիսի դժուարութիւններով ու զոհարերութիւններով պատրաստուած մի կեանք էր այն, որ սկսել էր տալ իր փայլուն պտուղները: Վահան Նալբանդեանը ծնուել է Վանում 1876 թուին, նոյեմբերի 10-ին, սկզբնական կրթութիւնը ստացել է հայրենի քաղաքում, ապա, երբ ծնողները գաղթել են Ռուսաստան, նա 1888-ին մտել է Ներս. դպրանոց 12 տար. հասակում: Իբրեւ ամենաառաջագէտ աշակերտներից մինը, աւարտելով յիշեալ դպրանոցը, Նալբանդեան 1894 թուին Քամոյկնց եկեղեցու նպաստով անցաւ Գերմանիա՝ բարձրագոյն կրթութիւն ստանալու համար: Նա ուսանում էր գլխաւորապէս Լայպցիգում, ուր և լսում էր գրական-պատմական և փիլիսոփայական առարկաները: Ուսանողական տարիները այդ բարեխիղճ և շիտակ երիտասարդի համար անդուլ, աշխատանքի և տքնու-

թեան տարիներ եղան ի մեծ հիացումն իր ընկերների և ուսուցիչների Աւարտելով իր ուսումը որպէս փիլիսոփայութեան դոկտոր, երիտասարդ Նալբանդեան 1901 թուին վերադարձաւ Թիֆլիս, ուր աշխատակցում էր «Մշակին» և «Մուրճին»։ Նրա մի ուսումնասիրութիւնը՝ Իբսէնի մասին, որ ապագրուեց մեր թերթում և որի վերջին մասը տալիս ենք ներկայ համարում՝ մի ուշադրաւ գրական-քննադատական աշխատանք է և վկայում է հեղինակի լուրջ մտաւոր պատրաստութիւնը, կիրթ ճաշակը և ազնիւ, մարդասէր տենդենցիաները։

Անցեալ տարի «Մշակում» նրա գրած թատրոնական և մատենագրական տեսութիւնները միանգամից նրա վրայ դարձրին հասարակութեան լրջմիտ մասի խորին ուշադրութիւնը և նրա անուանը կապեցին շատ քաղցր յոյսեր։ Այս հայերէն աշխատութիւններից դուրս նա գրել է նաև գերմաներէն իր դիւսերտացիան պատմաքան Բանկէի մասին „Leopold von Rankes Bildungsjahre und Geschichtsauffassung“ վերնագրի տակ։ Այս տարի սեպտեմբերին նա սիրով ընդունեց Էջմիածնի ճեմարանի վարչութեան հրաւերը, իրրեւ ուսուցիչ, որովհետև նա նպատակ ունէր, օգտուելով այնտեղի հարուստ գրադարանից, հայոց պատմութեան մի լուրջ ուսումնասիրութիւն կատարել։

Եւ այդ բոլոր զեղեցիկ յոյսերը այսօր անողոք մահուան մի հարուածով մնացին անկատար։ Այս անակնկալ և արտասուալից մահը, խորին վիշտ պիտի պատճառի ոչ միայն նրա մերձաւորներին, այլ և իր բոլոր ծանօթներին և մանաւանդ նրա մօտիկ ընկերներին։ Ամեն տեղ նա ընդհանուրի սիրելին էր, իր քաղցր բնուրութեամբ, իր լրջութեամբ, իր ընկերսիրութեամբ և իր անպայման չիտակութեամբ։

Որպիսի տխուր զուգադիպութիւն! դեռ անցեալ տարի այս օրերում, երբ նա «Մշակում» հրատարակեց իր մի ուսումնասիրութիւնը Դուրեանի մասին, ո՞վ կարող էր կարծել, թէ նա էլ մի Դուրեան է, մի բուրալից, բայց վաղանցուկ ծաղիկ, որի վրայ չուտով փչելու է մահաշունչ քամին։

Անկարելի և անդառնալի առաջ խոնարհեցնում ենք մեր գլուխը և նրա ծնողներին ու մերձաւորներին խնդրում ենք ընդունել և մեր վշտակցութիւնը նրանց մեծ կորստի առթիւ, մի կորուստ, որ մերն էլ է, ինչպէս և ամբողջ հայ հասարակութեան։